

շահագրգռեն բնական հարստութիւններ և տնտեսական զարգացումը պիտի ապահովուի, այս բոլորը գործունէութիւնների և բնական ուժերի ամբողջութիւնն է, որոնք դրւում են Կայսրութեան ծառայութեան տակ, մի խօսքով սա Թիւրքիայի վերականգնումն է, որի համար հայերը, իբրև հաւատարիմ հպատակներ և լաւ հայրենասէրներ պիտի աշխատեն իրենց ամբողջ գիտակցութեամբ և իրենց բոլոր ուժերով:

Հաճեցէք ընդունել, պարոն Խմբագիր, յարգանացս խորին հաւատարիքը:

Նախագահ Հայկական Ազգային Պատուիրակութեան

ՊՕՂՈՍ ՆՈՒԲԱՐ

Փարիզ, 16 փետ. 1914

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵՆՈՐՈՂՈՒՄՆԵՐ.

Հայկական բարենորոգումներ! Սա բաւականին հին երգ է: Սան Ստեփանոյի դաշնադրութեան համաձայն Բ. Գոռն յանձն է առնում «անյապաղ իրադործել այն բարեփոխումներն ու բարենորոգումները, որ պահանջում են տեղական կարիքները Հայոց բնական նահանգներում, և երաշխաւորել նրանց ապահովութիւնը չեքքեզներ և քրդերի դէմ»: 1878 թուի յունիսի 4-ին անգլո-թիւրքական դաշնադրութիւնը առանց այլ և այլի հաստատում է այս համաձայնութիւնները: Այնուհետև Սան-Ստեփանոյի դաշնադրութիւնը փոխարկուեց Բերլինի դաշնադրութեամբ, որի 61 յօդուածը վերարտադրեց նոյնութեամբ, բառ առ բառ վերոյիշեալ անօրէնութիւնը, աւելացնելով հետեւեալ հաստուածը, որ ըստ երեւոյթին վճռական է երեւում. «Բ. Գոռը այս նպատակի համար ձեռք առնուած միջոցները պարբերաբար պիտի ծանօթացնի տէրութիւններին, որոնք պիտի հսկեն նրանց գործադրութեան վերայ»:

Ըստ երեւոյթին ամենքն էլ բաւարարւում են: Թիւրքական կառավարութիւնը մտցնելու է բարենորոգումներ-իրօք չափազանց պարզ-որպէսզի դադարեցնի քուրդերի արշաւանքները, յափշտակութիւնները, հայկական երկրի կոտորածները և վերջ դնի վարչական կեղեքումներին, որոնց շնորհիւ կատարւում էին վայրագ արարքներ: Եւ այլևս երկեւզալի

չէր, որ նա պիտի յետաձգէ այդ խնդիրը, ինչպէս նա միշտ անուամ էր, քանի որ նա նաեւ կոչւոյ պետութիւններն և քանի որ վերջիններս յանձն են առնում խնամք տանել բարենորոգումներն գործադրումներն վերանկելու վրայ:

Մի բան միայն արձանագրութեամբ չէր նախատեսուած. այդ այն է, որ Ռուսը ոչ մի բարենորոգում չի անի, որնա չի տալ ոչ մի հաշիւ, և որ պետութիւնները, վերահսկելու բան չ'ունենալով, չեն էլ հարցնելու թէ ի՞նչու համար: Արձանագրութիւնը կարելի չունէր նկատել առնել այդ հանդամանքը, որովհետեւ բոլորն էլ առաջուց գիտէին, որ դա այդպէս էլ պիտի լինի: Հայերը ու քրդերը հոգացողութիւնից դուրս էին: Մեռածները չափազանց յարմարուող անձնաւորութիւններ են, և եթէ ասլորողները յանդգնում էին աղաղակել, Վոդիսեսի նախադրու լուծիւնը ընդդէմ սիրենների մեղ ուսուցանում է ընտելն չանհանգստանալու արուեստը: Մարդասիրական մի գեղեցիկ ցոյց էին արել: Մնում էր միայն յարգել «Սուլթանի անկախութիւնը», որ նա գործադրում էր այդպիսի գեղեցիկ ձևով:

Ինչ վերաբերում է թիւրքերին և քրդերին, ոչ մի բան այնքան շատապօղական չէր նրանց համար, որքան Ջարդի, կողոպուտի և դրանց հետեւողներին համար համբարաշինելը: Կ'հաւատային, արդեօք, որ կ'դառնան ապստամբուող լեռնազան հայեր: Սա եղաւ մատոյցական Ջարդերի աղղանշանը, որ, 1893-ից մինչև 1897, հայկական գիւղերը դարձրեց նախճիւրներէ սոսկալի դաշտ: Կանայք, երեխաներ, ծերունիներ, բոլորն էլ անցան այնտեղով: Քաղաքներ և գիւղեր գիտակցօրէն սրի ճարակ դարձան: Այդ ժամանակուայ լուսանկարչական պատկերների մէջ, որոնք յետագայում դրուեցան մեր աչքերի առաջ, ցուցադրուած էին, որպէս զուարճութիւն, հաճոյքի տեսարան, երեխաների գլակներն կոյտեր՝ փորոտիք թափած մի քանի կանանց կոտորանքների հետ:

Վերոյիշեալ գրութիւնը տեւեց չորս տարի: Եւրոպան մտանեց Բերլինի դաշնագրութիւնը անուշադրութեան և սպանուածներն հաշիւը թուէարկեց հարիւր հազարներով: Կազմակերպուեցան բազմաթիւ կոմիտէներ Անգլիայում, որտեղից ճառերի յորդ անձրե տեղաց Հայաստանի վրայ: Մենք նոյնպէս կազմակերպեցինք այդպիսի կոմիտէներ Ֆրանսիայում՝ բազմաթիւ յօդուածներ յօրինելու համար. և այնուհետեւ գերեզմանային լուծիւնը ամեն բան մացրեց քրիստոնէական քաղաքակրթութեան փառաւոր կարգում: Արդուլ Համիդը վատտակեց կարմիր սուլթան մականունը: Այսօր նա ծերանում

է՛ անշքութեամբ մի քանի պալատներում հսկողութեան տակ, որ նրա դոհունակութիւնը, որ այնպէս լաւ է ծառայել յանուն Ալլահի, վանում է նրանից հեռու ամեն մի տաղտուկ յիշողութիւն:

Սակայն ընդունել էին բարենորոգումներն մի նախագիծ: Ոչ մի վայրկեան, թող լաւ իմացուի, չմտածեցին դործադրելու մասին: Ահսիցին միայն մաս առ մաս ջարդել: Իւրաքանչիւրն ազատ էր յուսալ, որ կ'ազարեն բոլոր ջարդերը միայն այն ժամանակ, երբ այլևս ջարդելու մարդ չի մնայ:

Վրայ է հասնում թիւրքական յեղափոխութիւնը, դրան հետևում է Արդիւ Համիդի գահնկեցութիւնը: Մեծ ցնծութիւն Հայաստանի յեռներում: Տաճկաստանը եւրոպականում է, Մարգկային Իրաւունքները գնում են երեւան դալու Արևելքում: Եղան մարդիկ՝ որ այդ յոյսն ունեցան: Պատրանքներին վերջ դրուեց Ադանայի ջարդերով: Եւ կ'ստատովանեմ անկեղծօրէն, յոգուտ երիտասարդ թիւրքերի ոեէ՛ արդարացման, որ առաջ հակուած էի կարծելու թէ, աշտեղ միայն անփորձութիւնն էր մեղաւորը: Յուզիչ կողմնապահութեան այն վարժունքը, որով նա տանում էր քննութիւնը բոլոր պատասխանատուութիւններէ խուսափելու ուղղութեամբ, ինչպէս և նրա սուտ առերևոյթ հաւաստիացումները թոյլ են տալիս մեզ ամեն տեսակ ենթադրութիւններ անել նրա խորունկ մեղսակցութիւնների նկատմամբ: Ամեն տեսակ կեղեքումներ շարունակուեցին: Նրանք երբէք չ'ազդարեցին:

Վերջապէս Բալիանեան պատերազմը մի անգամ ևս դրեց Արևելեան հարցը եւրոպայի առաջ: Հայերը վերսկսեցին նոր յոյսերով ապրել: Եւ ատցի թէ ինչպէս Պօլոս Նուբար փառամ, որ պատկառելի էր ուղարկուած Վարուդիկոսի կողմից մեր պետութիւնների մօտ Հայերի համար կենանքի և գոյրի ապահովութիւնը ձեռք բերելու, յաջողեցրել էր ձեռք բերել եւրոպական կարիքներին հաւատարմութիւնը, շնորհիւ իր ճկուն և յարատևող մի գեղեցիկ խառնուածքի:

Եթէ ներկայիս փորձը պատկուած է յաջողութեամբ, սա մեծ մասամբ նրա շնորհին է և ևս իրեն պատիւ է բերում: Ոչ մի օր չի անցկացրել, որ նորանոր ջանքեր չ'իշակէր իր ժողովրդի պատճառով: Դուռը ցանկացաւ հրապուրել նրան իր սովորական խոստումներով: Նա բնաւին չ'ենթարկուեց: Բերլինը թերհաւատում էր: Նա հաւաստիացրեց Բերլինին: Կարճ, մի շարք բարենորոգումների նախագծերից յետոյ, վերջապէս, եկան մի որոշ համաձայնութեան և ընդունուեց մի նոր նախագիծ:

Մենք դրա մասին հրատարակել ենք զեկուցման մէջ: Եթէ անհրաժեշտ է ճշմարտութիւն ասել, ես նշանակութիւն եմ տալիս միայն գործադրումների ապահովութիւններին, որոնք կապուած են բարենորոգումների հետ: Պօղոս Նուբար փաշան խնդրում էր եւրոպական վերատեսուչներ: Սա, անկասկած, կ'ընէր հայ ժողովրդի կեանքի ազատումն, որոնք ցրուած են գիւղերում և ուր նրանք կաղմում են համարեա միշտ էլ փորձաւորամտութիւն: Բայց Սուլթանը ցանկացաւ մի անգամ ևս ցոյց տալ իր «անկախութիւնը» և եւրոպական ղեկավարտիան, որի վրայ զրօշմուտ է հայկական արեան ընծը, մի աւելորդ անգամ ևս ղիջնց:

Աւրեմն ընդհանուր վերատեսուչներ կ'նշանակուեն Դրան Կողմից պետութիւնների տաւալարկութեամբ, բայց եւրոպական փոքրիկ պետութիւնների միջից ընտրուած մարդկանցից: Կուսակալութիւններից դուրս որանք կուենեան բարձր իշխանութիւն բոլոր պաշտօնեաների վրայ, որոնց նրանք կարող են պաշտօնազուրկ անել և փոխարինել: Եթէ այս անգամին բացառաբար վճռում են գործադրել դաշնադրութեան ընագիւրդ, թող մեզ թոյլատրուի կարծել, որ դա իրականացաւ միայն այնպիսի տանջալից ժամանակաշրջանից յետոյ, որի համանմանը չկայ պատմութեան մէջ: Հայկական տանջանքները վերջապէս դադարելու են:

Արդէն յայտարարում են, որ Բ. Դուռը խնդրել է Պետութիւններից իրենց թեկնածուների ցանկը վերատեսուչների տեղի համար: Երանի թէ այս լուրը հաստատուէր:

Տաճկական կառավարութեան համար միշտ անհաճոյ է եղել ճանաչել հայերին, որպէս մի առանձին ցեղ: Ամեն անգամ, երբ նրանից պահանջել են յօդուտ հայերի բարենորոգումներ, նա պատասխանել է. «Ենչումիայն յօդուտ հայերի: Մենք կանենք, ձեր այդ բարենորոգումները, բայց յօդուտ Կայսրութեան բոլոր հպատակներին»: Եւ պէտք էր բարեփոխել կայսրութեան ամբողջ վարչական կազմը, սկսած հէնց այն սերալիւ մինիստրից, որն իրեն ձեացնում էր այնքան բարեմիտ վերոյիշեալ խօսակցութեան ժամանակ, և թիւրքերը ուրիշ ոչ մի միջոց չ'գտնելով հայերի գէմ՝ սկսան ջարդել և դա առաջ էր գալիս նրանից, որ նրանք ողոր էին նայել հայերի վրայ, շնորհիւ եւրոպական կազմալուծման, որպէս մի անպաշտպան ժողովրդի ընդգէմ օտոմանեան կայսրութեան:

Ահա այս փոքրիկ խաղն է, որ այսօր պիտի վերջացնել: Սրա համար բաւական է եւրոպայի բարեացակամութիւնը և

իր պատասխանատուութեան չափաւոր գիտակցութիւնը: Ինչու եմ խօսում ամբողջ Եւրոպայից, երբ բաւական է միայն մի պետութիւն ձայն բարձրացնել պատեհ վայրկեանում՝ որ բոլորին էլ դնի միջամտելու պարտականութեան մէջ, եթէ միայն կ'զգացուի նրանց կարիքը: Ես անկեղծաբար ցանկանում եմ, որ այս ծանր հոգսը մեզանից վերանայ: Բայց թիւրքերը սովորեցրել են մեզ դէմ ելնել այնքան անտկնկալ պատահմունքներին, որ ես դժուարանում եմ յուսալ, թէ նոր բէթիմը պիտի կարողանայ վերականգնուել առանց Բ. Դրան, ինչպէս և երաշխաւորող պետութիւնների նախնաձախնդրութիւնը շարժելու: Մարդասիրական զգացմունքից դուրս, որ պիտի ոգեւորի ամենքին, եւրոպական շահը պահանջում է, որ լաղաղութիւն տիրի Ասիայում Սուլթանի բոլոր հպատակներին համար՝ ոչ թէ այն լաղաղութիւնը, որ առաջ է գալիս ջարդի ապշանքի լուրերից, այլ արդարութեան լաղաղութիւնը, եթէ միայն կարելի է հասկանալ արդարութիւն առանց ազատութեան:

Ժ. Կիւմանսո *)

Հայկական բարենորոգումներ և բաժանման բաղաձայնութիւն.

Փարիզ, 15 փետրուարի,

Ուղիղութ օր է, կիւրակի փետրուարի 8-ին**), որ Հայկական բարենորոգումների վերաբերեալ համաձայնութիւնը ստորագրուեց Կ. Պօլսում տաճկական կառավարութեան և Ռուսաստանի ներկայացուցչի ձեռքով: Հայաստանը պիտի բաժանուի երկու հատուածների, որոնցից առաջինն մէջ կ'մտնեն Սյազի, Էրզնուրուի և Տրապիզոնի վիլայեթները, իսկ երկրորդն մէջ՝ Վանի, Բիթլիսի, Խարբերդի և Դարբենդի վիլայեթները: Իւրաքանչիւրի հատուածի մէջ պիտի գրուի եւրոպական մի Ընդհանուր Վերատեսուչ ընտրուած ու է փոքրիկ պետութեան

*) Ժ. Կիւմանսոն նախկին նախարար Ֆրանսիայի և յայտնի հասարակական գործիչ է և իշխանութիւնում, որի համար և նորա կարեւոր յօգուածն ֆրանսերէն «L'homme Libre» Թերթից (15 փետրվ. ն. տ.) Թարգմանարար բերում ենք: Խմբ.

**) Ըստ մեր տոմարի յունուարի 26-ին Ժ. խմբ.